

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ԲԱԳՐԱՏ ԵՓՐԵՄԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

**ԱՐՁԱԿ ԺԱՆՐԵՐԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ԻՏԱԼՈ ԿԱԼՎԻՆՈՅԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Ժ.01.07 - «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանում

Գիտական ղեկավար՝
թեկնածու, պրոֆեսոր

բանասիրության գիտությունների
ՆԱՏԱԼՅԱ ՄԻՔԱՅԵԼԻ ԽԱՉԱՏՉՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝
դոկտոր, պրոֆեսոր

բանասիրության գիտությունների
ՍՈՆԱ ՍԱՐԳՍԻ ՍԵՖԵՐՅԱՆ

բանասիրության գիտությունների

թեկնածու, դոցենտ

ՀԱՍՄԻԿ ԱԶԱՏԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի Հայ-ռուսական /սլավոնական/
համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2016 թ. Հունիսի 24-ին, ժամը 12.30-ն ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի Հայ և արտասահմանյան գրականության 003 մասնագիտական խորհրդում

(հասցեն՝ Երևան, Գրիգոր Լուսավորչի 15)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գրադարանում

Մեղմագիրն առաքված է 2016 թ. մայիսի 24-ին

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար

բանասիրության գիտությունների թեկնածու՝

Ս. Ա. Մարգարյան

Աշխատանքի ընդհանուր բնութագիրը

Ատենախոսությունը նվիրված է 20-րդ դարի իտալացի նշանավոր վիպասան Իտալո Կալվինոյի (1923-1985) գրական ժառանգության ուսումնասիրությանը: Լինելով եվրոպական վիպական ավանդույթների շարունակողը՝ Կալվինոն իր ստեղծագործություններում միահյուսել է դասական և նոր վիպական ձևերը, համադրել է տարբեր գեղարվեստական մեթոդներ և գրական ժանրեր:

Գրողի ստեղծագործական ուղին ակնհայտորեն բաժանվում է երեք փուլի, որոնցից յուրաքանչյուրին հատուկ առանձնահատկությունները որոշարկել են Կալվինոյի ստեղծագործության ***ժանրային յուրահատկությունը:***

Իտալո Կալվինոն իր գրական գործունեությունն սկսեց 1940-ական թվականներին, երբ մոդեռնիստական հոսանքներն ու էսթետիզմն իրենց տեղն էին զիջել նոր ձևավորված նեոռեալիզմին: 1950-60-ական թվականներին իրականության հանդեպ գրողի վերաբերմունքի փոփոխությունը պայմանավորել է նրա ստեղծագործական մեթոդի, վեպի ժանրի, կառուցվածքի և կերպարային համակարգի սկզբունքային փոխակերպումները:

Աշխատանքում հանգամանորեն քննվում են Կալվինոյի այդ տարիներին գրված «Մեր նախնիները» եռերգությունը կազմող բազմաշերտ ֆանտաստիկ վեպերը, դրանցում միավորված հեքիաթի, հերոսական պոեմի, արկածային և ավազակային, դաստիարակության, ասպետական և այլ վիպական ժանրերին հատուկ տարրերը, որոնք, տարբեր կերպ արտահայտվելով, յուրօրինակ վիպական փոխակերպումներ են ստացել: Եռերգության մեջ տեղ գտած բազմաթիվ միջտեքստային հղումները, պատումի ճկունությունը և այլ առանձնահատկություններ փոխակերպվելով, առավել տեքստային բնույթ կրելով՝ արտահայտվել են Կալվինոյի ուշ ստեղծագործական շրջանում գրված պոստմոդեռնիստական վեպերում:

Ատենախոսություն մեջ փորձ է արվում Կալվինոյի ուշ շրջանի վեպերում վերհանել ժանրային և կառուցվածքային առանձնահատկությունները, պոստմոդեռնիստական գեղագիտությանը բնորոշ ինքնարտացոլումը, մետապատումը, միջտեքստայնությունը, հատվածայնությունը, հեզնանքը, ներդաշնակության և քառսի, իրականության և պատրանքի, պատմող և տեքստ, պատմող-կերպար փոխհարաբերությունները:

Բազմաթիվ ժանրային շերտերի (շրջանակային պատում, հեքիաթ, նովել, առակ, վեպ-մեմուար, վեպ-թրիլեր) միջոցով այս վեպերում ստեղծվում են իրականի և անիրականի (գրքայինի) փոխհարաբերության նոր պատկերներ:

Թեմայի արդիականությունը

Ատենախոսության **արդիականությունը** պայմանավորված է ժամանակակից գրականագիտության մեջ ժանրի, մասնավորապես՝ **վեպի** ժանրի, ցայսօր չլուծված խնդրի հանդեպ գիտական հետաքրքրությամբ: Բացի այդ Կալվինոյի վեպերի ժանրային փոխակերպումները ոչ միայն արտացոլում, այլև հաճախ նախանշում են 20-րդ դարի եվրոպական արձակի զարգացման ուղիները, ուստի Կալվինոյի ստեղծագործությունների ուսումնասիրությունը կարող է նպաստել անցյալ դարի գրական գործընթացի մասին ավելի լայն պատկերացում կազմելուն:

Ուսումնասիրության առարկան, նպատակներն ու խնդիրները

Ատենախոսության ուսումնասիրության առարկան Իտալո Կալվինոյի արձակի ժանրային և կառուցվածքային առանձնահատկություններն են, դրանց զարգացումներն ու փոխակերպումները՝ հեղինակի ստեղծագործության **Ֆանտաստիկ** շրջանում գրված «Մեր նախնիները» եռերգության, «Կիսված վիկոնտը» «Բարոնը ծառի վրա» և «Գոյություն չունեցող ասպետը» և **պոստմոդեռնիստական** (1970-ական թթ.) շրջանի «Խաչված ճակատագրերի ամբոցը» (1969, հրատ. 1973), «Անտեսանելի քաղաքներ» (1972), «Եթե ձմեռային մի գիշեր մի ճանապարհորդ» (1979) վեպերում:

Աշխատանքի **նպատակն է** ուսումնասիրել **ժանրային փոխակերպումը Կալվինոյի վիպագրության մեջ:**

Այդ նպատակին հասնելու համար ատենախոսության մեջ առաջադրված են հետևյալ **խնդիրները.**

- ներկայացնել վեպի ժանրի տեսության հիմնական դրույթների մեր դիտանկյունը,
- վերհանել Կալվինոյի ստեղծագործության «ֆանտաստիկ» և պոստմոդեռնիստական փուլերին հատուկ գեղարվեստական առանձնահատկությունները, որոնք պայմանավորել են նրա վեպերի ժանրային յուրահատկությունը,
- վերլուծել Կալվինոյի ստեղծագործական մեթոդի զարգացման առանձնահատկությունները:

Աշխատանքի մշակվածությունը և գիտական նորույթը

Կալվինոյի գրական ժառանգության ուսումնասիրությանն անդրադարձել են բազմաթիվ գրաքննադատներ, գրական տեսաբաններ և նշանագետներ: Գրողի արձակին նվիրված քննադատական գրականությունը պայմանականորեն կարելի է բաժանել խմբերի՝ կենսագրական բնույթի,

առանձին ստեղծագործություններին կամ խնդիրներին, գեղարվեստական հնարներին նվիրված մենագրություններ, հոդվածներ, գրախոսականներ: Սակայն այդ աղբյուրների հեղինակները հիմնականում սահմանափակվում են Կալվինոյի ստեղծագործությունների տեսանկյունների ուսումնասիրությամբ: Բազմաթիվ քննադատներ և տեսաբաններ նշում են ֆանտաստիկ տարրերի առկայությանը հեղինակի վեպերում՝ առանց մասնավորեցնելու կառուցվածքային կարևոր նշանակություն ունեցող հեքիաթի տարրի առկայությունը: Որոշ տեսաբաններ, նշելով գեղարվեստական կերպարների փիլիսոփայական նշանակությունը՝ չեն նկատում դրանց կապը 18-րդ և 19-րդ դարերի գրական կերպարների հետ: Վերջին տասնամյակների քննադատական գրականությունն անդրադառնում է Կալվինոյի ուշ շրջանի վեպերի կառուցվածքային խնդիրներին, առանց մանրամասնելու դրանց տեսական հիմքն ու այլ դասական տեքստերի հետ հասկացության կապը: Ատենախոսության մեջ փորձ է արվում լրացնել այդ բացը՝ կարևորելով Կալվինոյի վեպերում տարբեր ժանրային շերտերի փոխակերպման, վիպական խոսույթների, կառուցվածքի առանձնահատկությունները, ֆանտաստիկ և պոստմոդեռնիստական վեպերի միջև ժանրային և պատումային կապը: Դրանում է աշխատանքի գիտական **նորույթը**: Հարկ է նշել նաև, որ մինչ օրս Կալվինոյի վեպերից ոչ մեկը չի թարգմանվել հայերեն և սույն ատենախոսությունն, ըստ էության, հայ գրականագիտության մեջ հեղինակի յուրօրինակ գեղարվեստական աշխարհի ուսումնասիրության առաջին փորձն է:

Աշխատանքի տեսական-մեթոդաբանական հիմքը

Ատենախոսության տեսական հիմքն են կազմում վեպի ժանրին նվիրված Բախտինի, ֆորմալիստներ Տոմաշևսկու, Էյխենբաումի, Պրոպայի, ստրուկտուրալիստներ և պոստստրուկտուրալիստներ Բարտի, Լոսմանի, Մելետինսկու, Էկոյի մոտեցումները, պոստմոդեռնիստական վեպի տեսաբան Ի.Հասանի սահմանումներն ու դասակարգումները: Կիրառվել են տարբեր տեսական մեթոդաբանական սկզբունքներ, մասնավորապես համեմատական-տիպաբանական, ինչպես նաև առանձին տարրերի պոստմոդեռնիստական վերաիմաստավորման վերլուծության համար՝ դեկոնստրուկտիվիստական մեթոդները:

Ուսումնասիրության փորձաքննությունը

Աշխատանքը քննարկվել է Վ.Բրյուսովի անվան ԵՊԼՀ-ի Համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոնում և երաշխավորվել է պաշտպանության: Աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հոդվածներում, միջազգային և միջբուհական գիտաժողովներում ունեցած զեկույցներում:

Աշխատանքի կառուցվածքը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի ընտրությունը, նորույթն ու արդիականությունը, հարցի պատմությունը, ներկայացված են Կալվինոյի գեղարվեստական մեթոդի զարգացման փուլերը, ձևակերպված են ատենախոսության առարկան, նպատակն ու խնդիրները:

Ատենախոսության **առաջին գլուխը** վերնագրված է «**Կալվինոյի 1950-60-ական թվականների արձակի ժանրային յուրահատկությունը**»: Կալվինոյի վեպերի վերլուծության համար տեսական հիմք են հանդիսացել վեպի ժանրի՝ 20-րդ դարի տեսաբանների հիմնական դրույթները: Կալվինոյի վեպերին հատուկ են բախտիկյան «բազմալեզվությունն» ու «բազմաձայնությունը», դրանք ներառում են ժանրային այլ շերտեր և դրանց վերախմաստավորումներ:

Կալվինոն իր գրական առաջին փորձերն սկսել է 1940-ական թվականներին, պատերազմից հետո, երբ Բոալիայում ձևավորվել էր **նեոռեալիզմը**: Շարժումը միավորել էր բազմաթիվ գրողների, կինոգործիչների և գեղանկարիչների: Այս փուլում Կալվինոն հրատարակում է «Վերջինն ագռավն է գալիս» պատմվածքների ժողովածուն և «Սարդերի հյուսած արահետը» վեպը: Ընդհանուր առմամբ, վեպն իր հստակ գծային կառուցվածքով, լեզվի պարզությամբ, գյուղի բնապատկերի, գավառական իրականության կենդանի նկարագրությամբ, գավառական կոլորիտը ստեղծող բարբառային խոսվածքի տարրերի օգտագործմամբ՝ **նեոռեալիստական** է:

1950-60-ական թվականներին գեղագիտական որոնումների արդյունքում սկբունքորեն փոխվում է աշխարհի պատկերման հանդեպ Կալվինոյի մոտեցումը, իրականությունը փոխարինվում է ֆանտաստիկ պատկերներով, վիպական քրոնոտոպի, կառուցվածքի, կերպարային համակարգի առանձնահատկությունները պայմանավորում են երևակայականը, արտասովորն ու անբացատրելին: Ժանրային այս կտրուկ փոփոխությունն իր ստեղծագործության մեջ գրողը բացատրել է հետպատերազմյան ժամանակաշրջանի հանդեպ իր ունեցած թերահավատությամբ: Գրողի ստեղծագործական կյանքում այս ժամանակաշրջանը նշանավորվում է վեպի ժանրային սկզբունքային փոխակերպումներով, կառուցվածքի և կերպարային համակարգի փոփոխություններով:

Առաջին գլխում վերլուծության են ենթարկվում Կալվինոյի **ֆանտաստիկ** շրջանում գրված «Մեր նախնիները» «հերալիկ» եռերգությունը կազմող «Կիսված վիկոնտը», «Բարոնը ծաղի վրա» և «Գոյություն չունեցող ասպետը» վեպերը:

Ճանտաստիկ վեպի և դրան հատուկ տարրերի ուսումնասիրության տեսական հիմքն են դարձել Ռ.Ջեքսոնի, Դ.Սանդների, Լ.Արմիտի և Յ.Տոդորովի տեսակետներն ու սահմանումները: Նշվում է, որ ֆանտաստիկ պատումի մեջ առանցքային տեղ են գրավում մտացածինը, երևակայականը և անհնարինը, այդուհանդերձ ֆանտաստիկն ունի բազմաթիվ նրբերանգներ, ձևեր և ենթաձևեր, որոնցից «Մեր նախնիներում» արտացոլվել են «հրաշալին» և «արտասովորը»: «Հրաշալին», որում կարևորվում է գերբնականի առկայությունը, արտահայտված է «Կիսված վիկոնտը» և «Գոյություն չունեցող ասպետը», իսկ «արտասովորը» և «անհավանականը» «Բարոնը ծառի վրա» վեպում: Հատկանշական է, որ երեք վեպերում էլ ֆանտաստիկը դրսևորվում է կերպարների ֆիզիկական վիճակներում, որոնք նշված են վերնագրերում և որոնց Կալվինոն բնորոշում է որպես նախնական «վիզուալ պատկերներ»:

Տոդորովը գտնում է, որ ֆանտաստիկ ժանրի կարևորագույն տեսանկյուններից մեկը թեմատիկան է կամ «իմաստաբանությունը»,¹ սակայն ժանրի բնորոշման մեջ կարևոր են թե՛ արտաքին, թե՛ ներքին ձևերը: Այսպես՝ ֆանտաստիկ վեպում կարևոր է թե՛ շարահյուսությունը (պատումը, շարադրանքը, կառուցվածքը), թե՛ իմաստաբանությունը (թեմատիկ տարրերը, մոտիվները, ֆանտաստիկ իրադարձությունները, կերպարանափոխությունը, կախարդական արարածները և այլն):

Ֆանտաստիկ ժանրերից մեկի՝ *հեքիաթի* տարրերն արտահայտված են «Մեր նախնիներում» թե՛ շարահյուսության, թե՛ իմաստաբանության պլանում: Երեք վեպերի ինցիպիտները կրում են հեքիաթի «լինում է, չի լինում» բանաձևի ազդեցությունը, այուժենե՛րում, թեև որոշակիորեն փոփոխված՝ առկա են հեքիաթային պատումում սկզբնական վիճակին հետևող՝ Պրոպպի սահմանած գործառույթները (հերոսներից որևէ մեկի տնից հեռանալը, հերոսի առջև դրվող արգելքը, դրա խախտումը, անտագոնիստի հետապնդումը և այլն):

Երեք վեպերն էլ պատմական հեռավոր անցյալից քաղված պատումներ են, որոնցում մասնավորեցված են պատմական ժամանակաշրջանները՝ 17-րդ դարը («Կիսված վիկոնտը»), 18-րդ դարավերջը և նապոլեոնյան արշավանքները («Բարոնը ծառի վրա»), Կառլոս Մեծի թագավորության ժամանակաշրջանը («Գոյություն չունեցող ասպետը»): Սակայն պատմությունն այստեղ ընդամենը ժամանակաշրջանի կոլորիտը պատկերելու, տրամադրությունը հաղորդելու միջոց է և ծառայում է որպես «գեղանկարային ֆոն»:

«Մեր նախնիներում» կարևոր դեր են կատարում նկարագրված իրադարձությունների ականատես *հեղինակ-պատմողները*: Այսպես, «Կիսված վիկոնտում» Մեղարդոյի արկածների մասին պատմում է քրոջ որդին, «Բարոնը ծառի վրա» վեպում Կոզիմոյի կենսագրությունը պատմվում է եղբոր կողմից, «Գոյություն չունեցող ասպետում» պատմողը մենաստանում փակված մի

¹ Тодоров Ц, Введение в фантастическую литературу. Дом Интеллектуальной Книги. М. 1999. С. 37

միանձնուհի է, որը վեպի ավարտին ներկայանում է որպես իրադարձություններին մասնակից կերպարներից մեկը: Այսպիսով, բոլոր վեպերում էլ առկա է առաջին դեմքով պատում, Ժ.Ժընետի սահմանմամբ «հումողիեզետիկ» պատմողներ:²

«Կիսաված վիկոնտը» վեպում սյուժեն հետևում է Վ.Պրոպպի՝ կախարդական հեքիաթի որոշ գործառույթներին: Գլխավոր հերոս վիկոնտ Մեդարդոն ճակատամարտի ժամանակ թնդանոթի արկից բաժանվում է երկու մասի և սկսում է գոյություն ունենալ երկու՝ բարի և չար «մեդարդոնների» տեսքով (ինչպես Ռ.Լ.Ստվենսոնի ը և Հայդը): Միրո կախարդական ուժով վիկոնտի աղավաղված մարմինը վերականգնվում է, և կախարդական հեքիաթի կանոնի համաձայն՝ հերոսն ամուսնանում է սիրելիի հետ:

«Բարոնը ծառի վրա» վեպը ժանրային առումով ավելի բազմաշերտ է, ֆանտաստիկ ֆոնին ավելանում են պատմավեպի, արկածային, ավագակային և դաստիարակության վեպերի ժանրերին բնորոշ տարրերը: Վեպը հազեցած է 18-րդ և 19-րդ դարերի պատմական դեմքերին (Դենի Դիդրո, Վոլտեր, Նապոլեոն Բոնապարտ) և կրոնական ու քաղաքական կազմակերպություններին (Ճիզվիտներ, մասոններ, յակոբինյաններ, բոնապարտիստներ) ուղղված հղումներով, սակայն պատմավեպն այստեղ որոշակիորեն պարողիայի ենթարկվող ժանրային շերտերից է, իսկ բոլոր խմբակները ծաղրի ենթարկված լուսավորական կաղապարներ են:

Վեպում բազմաթիվ են նաև 18-րդ դարի գրական հայտնի հերոսներին՝ Ռոբինզոնին, Ժիլ Բլասին, Ջոնաթան Ուայլդին, Գուլիվերին, բարոն Մյունխհաուզենին, Կանդիդին և այլոց միջտեքստային հղումները: Այս հղումների և կերպարային ընդհանրությունների շնորհիվ ստեղծագործությունը հիշեցնում է արկածային և, մասամբ նաև՝ դաստիարակության վեպ: Մակայն ի տարբերություն դաստիարակության վեպի հերոսի՝ Կոզիմոն հոգեբանական փոփոխության որևէ ուղի չի անցնում: Վեպում առավել կարևորվում է գործողության տարրը:

Եռերգության վերջին՝ **«Գոյություն չունեցող ասպետը»** վեպում հիմնական ժանրային շերտերն են իրոնիկամիկական պոեմը և ասպետական վեպը: Գլխավոր հերոսի՝ գրահում փակված անմարմին մի էության՝ Աջիլուվոյի սխրանքների նկարագրության շնորհիվ հերոսապատում հիշեցնող այս վեպում Կալվինոն քննարկում է **անձի ինքնության, «եսի», «գոյության» և «չգոյության»** փիլիսոփայական խնդիրները: Աջիլուվոն նույնքան վճռական ու հաստատական է, որքան արթուրյան հերոսապատումների կերպարները (Լանսլոտ, Պարսիֆալ) և ֆրանսիական ժողովրդական էպոսի հերոսը Ռուլանդը, սակայն նա գուրկ է մարմնից և մարդկային զգացմունքներից: Աջիլուվոն և իր վահանակիրը՝ բթամիտ Գուրդուլուն, հղում են Դոն Կիխոտ և Սանչո Պանսա գույզին, որով այս

² Genette G. Narrative Discourse. An essay in method. Cornell University Press. New York 1983. P. 244-245

վեպը՝ Մերվանտեսի «Դոն Կիխոտի» պես, ընկալվում է որպես ասպետական հերոսապատումի պարողիա: Վեպում հետաքրքրական է նաև **հերոսական պոեմի, ասպետական վեպի և հեքիաթի սինթեզը**: Մակայն այդ ժանրերին բնորոշ երջանիկ ավարտն այստեղ այլ վերաիմաստավորում է ստանում, քանի որ գլխավոր հերոսը՝ Աջիլուֆոն, անհետանում է, և նրա զենք ու զրահին և բոլոր կոչումներին տիրանում է մեկ այլ՝ գոյություն **ունեցող** ասպետը:

Եռերգությունը կազմող վեպերում առկա ժանրային վերաիմաստավորումները, որոշակի՝ «ինքնարտացոլիչ», մետատեքստային հնարները Կալվինոյի հաջորդ՝ պոստմոդեռնիստական վեպերի առանձնահատկությունների նախադրյալներն են:

Ատենախոսության **երկրորդ գլուխը՝ «Կալվինոյի պոստմոդեռնիստական շրջանի վեպերի ժանրային և կառուցվածքային առանձնահատկությունները»**, նվիրված է հեղինակի ուշ՝ պոստմոդեռնիստական շրջանի երեք՝ *«Նսաչված ճակատագրերի ամրոցը»* (1969, հրատ. 1973), *«Անտեսանելի քաղաքներ»* (1972), *«Եթե ձմեռային մի գիշեր մի ճանապարհորդ»* (1979) վեպերի **ժանրային և կառուցվածքային խնդիրների** ուսումնասիրությանը: Մոդեռնիստական և պոստմոդեռնիստական վեպի ընդհանրությունների և տարբերությունների շուրջ բնորոշումներում կարևորվում են Բ.Հասանի դասակարգումներն ու սահմանումները: Այս վեպերն աչքի են ընկնում պոստմոդեռնիստական գրականությանը բնորոշ այնպիսի առանձնահատկություններով, ինչպիսիք են **ինքնարտացոլումը, մետապատումը, միջտեքստայնությունը, հատվածայնությունը, հեզնանքը, ներդաշնակության և քառյակի, իրականության և պատրանքի փոխհարաբերությունները**:

Պոստմոդեռնիստական գեղագիտության որոշ առանձնահատկություններ, ինչպես օրինակ, մետատեքստայնությունն ու ինտերտեքստայնությունը, հեզնանքը, «անվստահելի» պատմող հասկացությունը, պատմող-տեքստ, պատմող-կերպար փոխհարաբերություններն արտահայտված են դեռ «Մեր նախնիներում», սակայն եռերգության պատումը գծային, ավանդական է, կատարում է «պատմություն պատմելու» իր գործառույթը, պատմողն էլ երբեք դուրս չի գալիս տեքստի սահմաններից: «Մեր նախնիներում» դեռ նկատելի չեն **հեղինակ և տեքստ, ընթերցող և տեքստ** փոխհարաբերությունները և տեքստային **խաղը**, որոնք հատուկ են Կալվինոյի ուշ շրջանի երեք վեպերին՝ դրանք դարձնելով **բաց, տարբեր մեկնաբանությունների ենթակա** ստեղծագործություններ: Կարևորագույն հատկանիշը, որն ընդհանուր է եռերգության և ուշ շրջանի երեք վեպերի համար՝ **ֆանտաստիկ** բնույթն է:

Վերջին երեք վեպերում ֆանտաստիկն արտահայտվում է ոչ այնքան արտասովոր, զարմանալի, գերբնական իրադարձություններում, որքան ընդհանուր պատումում գերիշխող ցնորական տրամադրության, «երագի մթնոլորտի», իրականի և անիրականի փոխհարաբերության մեջ:

«Մեր նախնիները» եռերգությունը կարելի է համարել «բաց ստեղծագործություն», քանի որ այն բաց է տարբեր մեկնաբանությունների համար, սակայն նախաձեռնությունն այդ վեպերում գտնվում է պատմողների ձեռքում, իսկ ընթերցողի դերը նվազագույն է: Կալվինոյի ուշ շրջանի վեպերում հեղինակային տեքստը չի օտարում ընթերցողին:

Երեք վեպերում էլ առկա են այնպիսի *հիպերտեքստային* առանձնահատկություններ, ինչպիսիք են հատվածայնությունը, տեքստային բարդ կառուցվածքը, յուրօրինակ համակցումները, ընթերցողին ուղղված մարտահրավերը, Ռ. Բարտի արտահայտությամբ՝ «բաց դինամիկ տարածությունը», որոնք թույլ են տալիս այդ վեպերը անվանել *հիպերվեպ*, տեքստային ֆրագմենտների հատումներով, խաչաձևումների միջև ընթացող *համակցման խաղով* (gioco combinatorio):

Վերջին երեք վեպերում տեքստը կառուցված է բորխեսյան «կարճ գրվածքների» համակցումով, մեկ ընդհանուր պատումային շրջանակի մեջ միավորումով: Կալվինոյի այս վեպերում ակներև է դառնում տեքստային «լաբիրինթոսի» սկզբունքը:

«Խաչված ճակատագրերի ամրոցը» վեպի ժանրային առանձնահատկությունները դրսևորվում են դրա հիպերտեքստը կազմող ֆանտաստիկի նոր հորիզոնների ստեղծման և հին տեքստերի վերաիմաստավորման մեջ, պատմություն պատմելու նոր ձևերում և այլ հնարներում: Ընդհանուր պլոթից զուրկ այս վեպը կառուցվածքով մոտ է Ջ.Բոկաչչոյի «Դեկամերոնին» և Ջ.Չոսերի «Քենթրբերյան պատմվածքներին»: Սակայն Կալվինոյի վեպը տարբերվում է այս ստեղծագործությունների «գծային», «ավանդակակն» պատումից, դառնում է ֆրագմենտար և ձեռք բերում ոչ գծային բնույթ (*non-linearity*):

Վեպում անանուն «հումողիեզետիկ» պատմողը ներկայացնում է, թե ինչպես ճանապարհային հոգնածությունից համրացած ճանապարհորդների հետ միասին հայտնվում է «խիտ անտառի մի ամրոցում», որտեղ սեղանի մոտ հավաքվելով և տարոյի քարտերը նետելով՝ փորձում են միմյանց պատմություններ պատմել: Տարոյի պատկերներից ստեղծված պատմությունների վերծանումը կախված է անանուն պատմողից, որն իր պատումը հյուսում է ենթադրությունների և վարկածների միջոցով: Բոլոր պատմություններում տեքստն ուղեկցված է տարոյի արկանով, սակայն Կալվինոն չի սահմանափակվում պարզապես արկանը տեքստին կցելով, այլ նաև նկարագրում է պատկերի բովանդակությունը, որը տեքստը կոմիքսից վերածում է վեպի: Կերպարների պատմությունները փոքր արձակի տարբեր ժանրային պատկանելություն ունեն, ինչպես, օրինակ՝ *հերոսապատում*, *հեքիաթ*, անսպասելի շրջադարձով *նովել*, *բարոյափիլիսոփայական առակ*:

Ճատկանշական է, որ տարոյի քարտերի միևնույն պատկերը կարող է տարբեր նշանակություններ ունենալ. այսպես, օրինակ, *Խեղկատակի արկանը* կարող է նշանակել կա՛մ ավազակ, կա՛մ սատանա, *Կին Պապի* արկանը՝ մե՛րթ

քրմուհի, մե՛րթ միանձնուհի, մե՛րթ խորհրդավոր կին: Վեպում կարևոր տեղ է զբաղեցնում նաև դասական գրական հայտնի հերոսների՝ Ռոլանդի, Ֆաուստի, Պարսիֆալի, Լիրի, Մակբեթի, Լեդի Մակբեթի, Համլետի, Օֆելյայի, Կորդելյայի հետ նույնացումը: Ողջ վեպում իշխող երազի, ցնորքի տրամադրությունը թույլ է տալիս ենթադրել, որ սա պատմողի և հեղինակի՝ Կալվինոյի, ընթերցողական փորձն արտացոլող երազն է:

«Անտեսանելի քաղաքներ» վեպն իր յուրօրինակ ֆրագմենտար կառուցվածքով մոտ է «Խաչված ճակատագրերի ամրոցին», սակայն տեքստային տարրերի անսովոր համակցումների, պատմող-ունկնդիր, հեղինակ-տեքստ, տեքստ-ընթերցող երկակի և խնդրահարույց փոխհարաբերությունների, ժանրային երկիմաստությունների շնորհիվ ավելի բարդ է և պատկերավորման միջոցներով ստեղծում է բացառապես նոր վիպական խոսույթ: Վեպը կազմված է ինը գլուխներից, որոնցից ամեն մեկում զետեղված է հինգ (և միայն առաջինում՝ տասը) **վինյետ:** Արդյունքում ստացվում է շեղատառերով գրված մեկ ընդհանուր պլոտետային գիծ (որտեղ գործում են երկու հերոս՝ Մարկո Պոլոն և թաթարների կայսր Կուբլա Խանը) և հիսունհինգ վինյետ, որոնցում Մարկո Պոլոն Խանին պատմում է նրա կայսրության քաղաքների մասին:

Քաղաքների՝ որպես «անսովոր տուպոսների» նկարագրությունները հաշվի առնելով՝ որոշ գրականագետներ այն անվանում են ուտոպիա, սակայն այստեղ ուտոպիային բնորոշ իդեալական և, առհասարակ, հասարակության պատկերում չկա: Այստեղ քաղաքների պատկերումն արտահայտում է անձնական որոնում և ճանապարհորդի հետաքրքրություն:

Հատկանշական է, որ Մարկո Պոլոն և Կուբլա Խանը հաղորդակցվում են տարբեր՝ խոսքերի, ժեստերի, մնջախաղի և շախմատի քարերի միջոցով: Բոլոր այս առանձնահատկությունները տեքստը դարձնում են երկիմաստ: Համակցման խաղի միջոցով քաղաքների միջև ներքին և արտաքին կապ է ստեղծվում, որը դրսևորվում է վինյետների կրկնվող վերնագրերում՝ «Քաղաքներ և հիշողություն», «Քաղաքներ և երազանք», «Քաղաքներ և նշաններ», «Քաղաքներ և անուններ», «Քաղաքներ և փոխանակումներ», «Քաղաքներ և երկինք» և այլն: Այս բոլոր քաղաքները պարունակում են անիրականի որևէ ոլորտ, և բոլորին միավորում է մի հատկանիշ՝ «անտեսանելիությունը»:

«Քաղաքներում» իրականի և անիրականի փոխհարաբերությունը դրսևորվում է անցյալի, հիշողությունների, երազանքների, երկրային և հանդերձյալ աշխարհների զուգահեռ պատկերման մեջ: Արդյունքում անցյալն ու ապագան, երազանքն ու հուշը տարալուծվում են մեկ ամբողջական և անհայտ ժամանակի մեջ: Այս հատկությունների շնորհիվ վեպի ժանրը կարելի է նաև բնորոշել որպես **վեպ-մեմուար:**

Գրքի առաջաբանում Կալվինոն բնութագրում է վինյետները՝ որպես օրագրային գրառումներ, որոնք արտացոլում են իր ամենօրյա տրամադրությունները, հիշողությունները և, վերածվելով տեսիլքների, ավելի են սրում իրականության ընկալման հակասականությունը:

Քաղաքների ընկալման մեջ իրականի և անիրականի երկակիության խաղը ներկայացված է *երկրային կյանքի և հանդերձյալ աշխարհի փոխհարաբերությամբ*, ինչպես նաև *հայելայնությամբ*։ հայելին արտացոլում է իրականությունը և միաժամանակ հերքում այն ստեղծելով իրենը, որն էլ իր հերթին դառնում է անիրական։

«Քաղաքների» մյուս կարևոր տարրը ճարտարապետությունն է։ Սկզբունքորեն այս քաղաքները առանց ընթերցման տեսնել հնարավոր չէ, և փաստորեն, ընթերցվում է նրանց ճարտարապետությունը։ Լոստմանը դիտարկում է քաղաքը, քաղաքային ճարտարապետությունը որպես տեքստ, որտեղ բոլոր տարրերը կապված են միմյանց։ «Անտեսանելի քաղաքներում» «քաղաքային համատեքստը» քաղաքից դուրս է, այն գտնվում է Խանի ապարանքում, որտեղ ընթանում է ընդհանուր պատումային գիծը։ Այսպիսով քաղաքների ճարտարապետությունը՝ որպես տեքստ, կառուցում է «Անտեսանելի քաղաքների» **հիպերտեքստը**։

Կարևոր է նաև վեպում քաղաքների անձնավորման հնարը. բոլոր քաղաքները ներկայացված են կանացի անուններով։ Կնոջ նույնացումը քաղաքին, նրա «*մարմնի մասնատումը և վերածումը ճարտարապետության*»՝ վեպում զուտ բանաստեղծական միջոց է և Դանթեի «Նոր կյանքում» Բեատրիչեի և Պետրարկայի «Տաղարանում» Լաուրայի պատկերման արձագանքը։ Այստեղ կինը նույնանում է ճարտարապետությանը, այնուհետև՝ տեքստին և դառնում ընթերցման ենթակա տեքստային հերթական շերտ։

«**Եթե ձմեռային մի գիշեր մի ճանապարհորդը**» վեպում համագումարի են բերվում հեղինակի գրեթե բոլոր վեպերում կիրառած տեքստային ու պատումային, ժանրային և գեղարվեստական հնարները։ «Եթե ձմեռային մի գիշեր մի ճանապարհորդը» վեպ-լաբիրինթոս է, որտեղ իրարից անջատ հանդես են գալիս բազմաթիվ առանձին տեքստեր, որոնք իրենց հերթին պարունակում են այլ տեքստեր, որոնք միավորվում են վեպի մեկ ընդհանուր **մետապատումի** մեջ։ Սա վեպ է վեպերի, գրքերի կախարդական աշխարհի, այդ աշխարհը ներկայացնող անձանց մասին, որոնց միավորում է *ընթերցանությունը*։ Ինչպես նշել է հեղինակը «*սա վեպ է վեպեր ընթերցելու հաճույքի մասին*»³

«Եթե ձմեռային մի գիշեր մի ճանապարհորդը» *մետապատումի* (*metafiction*) ամենից հայտնի օրինակներից է։ Մետապատումը՝ 20-րդ դարի պոստմոդեռնիստական գեղագիտության ամենից բնորոշ հնարն է, սակայն դրա օրինակներ կարելի է գտնել նաև դասական տեքստերում (Մերվանտեսի «Դոն Կիխոտ», Ստերնի «Տրիստրամ Շենդի»)։ Կալվինոյի այս վեպում մետապատումը դրսևորվում է մեկ ընդհանուր պատումային շրջանակի մեջ ներառվող բազմաթիվ այլ պատումների՝ վեպ ինցիպիտների կամ միպրոպեպերի, իրական և գրքային աշխարհների միջև փոխհարաբերություններում, պատումի ինքնահղումներում։ Վեպում կիրառված են պատումներ՝ թե՛ առաջին, թե՛ երկրորդ, և թե՛ երրորդ

³ Calvino I. Mondo scritto e mondo non scritto. Mondadori. Milano 2011. P.125-126

դեմքով: Գլխավոր պատումային գիծը՝ «մակրոտեքստը», որ պատմվում է երկրորդ դեմքով՝ բաղկացած է տաստմեկ գլխից:

Վեպի գլխավոր հերոսն Ընթերցողն է, որին Կավվինոն դիմում է «դու Ընթերցող դ»: Թե՛ ընդհանուր պատումային գիծը, որտեղ ընթանում է Ընթերցողի և Կին Ընթերցողի փոխհարաբերությունները, թե՛ միկրովեպերը՝ ժանրային առումով առավելապես մոտ են **թրիլլերին** և **սիրավեպին**: Մակրոտեքստում Ընթերցողը փորձում է կարդալ տասը վեպ, սակայն բոլորն էլ տարօրինակ պատճառներով կիսատ է թողնում: Սրանով ստեղծվում է փոխհարաբերությունը գրքային և իրական աշխարհների միջև, որոնց կենտրոնում Ընթերցողն է: Երկու աշխարհներում Ընթերցողի այս հայտնվելը հիշեցնում է քերոլյան Ալիսային, որը գործում է միաժամանակ և՛ իրական, և՛ գրքային, երազային աշխարհներում: Տարբեր գրական աշխարհներում ընթերցողի հայտնվելը և ըստ դրա՝ նրա արարքներն ու գործողությունները, հիշեցնում են Վ.Նաբոկովի Լուիտային, որը նույնպես փակված է Հումբոլդտ Հուբոլդտի աշխարհում:

Չուգահեռ է տարվում նաև Կավվինոյի վեպի և Է.Բյորջեսի «Լարովի նարինջ» ու Վ.Կոննեգուտի «Մպանդանոց N 5» վեպերի միջև:

Հատկանշական է, որ միկրովեպերում, սիրավեպից և թրիլլերից բացի, առկա են նաև ժանրային այլ շերտեր՝ **քաղաքական հակաուտոպիա**, **լրտեսական թրիլլեր**, **էրոտիկ վեպ**, որոնք այստեղ ծաղրերգական, մեկնաբանություն են ստացել:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրելով Իտալո Կավվինոյի արձակի ժանրային, թեմատիկ, կառուցվածքային առանձնահատկությունները և դրանցով պայմանավորված *ժանրային փոխակերպումները*՝ հանգում ենք հետևյալ եզրակացություններին.

1. 20-րդ դարի *վեպը* որպես ժանրային, կառուցվածքային և բովանդակային բազմապլան համակարգ, ներառում է տարբեր ժանրերին հասուկ բազմաթիվ տարրեր: Վեպը շարունակ *ինքնահեզնանքի* ենթարկվող ժանր է, որն անընդհատ *գարգանալով*, նոր հնարավորություններ և նոր շերտեր է ձեռք բերում, սակայն անավարտ է և տարբեր շարունակությունների հնարավորություն է տալիս:
2. Ի.Կավվինոյի ստեղծագործական առաջին *նեոռեալիստական շրջանը* (1940-ական թվականներ) գրողի կայացման, ստեղծագործական ուղիների որոնման շրջան է և պայմանավորված է ժամանակի սոցիալ-քաղաքական իրադրության պահանջներով: Կավվինոյի այդ տարիներին հեղինակած «Վերջինն ագռավն է գալիս» պատմվածքների ժողովածուն և «Մարդերի հյուսած արահետը» վեպը գրված են նեոռեալիզմին հատուկ *լեզվի պարզությամբ*, *հստակ գծային կառուցվածքով*, գյուղի բնապատկերի, գավառական իրականության կենդանի նկարագրությամբ, բարբառային խոսվածքի տարրերի օգտագործմամբ:

3. Ի.Կավվինոյի արձակում կատարված նորարական էքսպերիմենտները, գիտական հետաքրքրություն ներկայացնող ժանրային փոխակերպումները կապված են նրա ստեղծագործական ուղու երկրորդ՝ *Ֆանտաստիկ* և երրորդ՝ *պոստմոդեռնիաստական* շրջանների երկերի հետ:

4. Ի.Կավվինոյի ստեղծագործական երկրորդ՝ *Ֆանտաստիկ* շրջանի (1950-60-ական թթ.) գեղագիտական որոնումների արդյունքում սկզբունքորեն փոխվում է աշխարհի պատկերման Կավվինոյի ընկալումը: Այդ տարիներին գրված «Մեր նախնիները» եռերգության մեջ («Կիսված վիկոնտը» «Բարոնը ծառի վրա», «Գոյություն չունեցող ասպետը») իրականությունը փոխարինվում է *Ֆանտաստիկ* պատկերներով, վիպական քրոնոտոպի, կառուցվածքի, կերպարային համակարգի առանձնահատկությունները պայմանավորում են *երևակայականը, հրաշալին, արտասովորն ու անբացատրելին*: «Մեր նախնիներում» ֆանտաստիկը հիմնականում արտահայտվում է գլխավոր հերոսների *ֆիզիկական վիճակի* անսովոր դրսևորումներով, որոնք արտահայտված են վերնագրերում: Կավվինոն դա անվանում է նախնական «վիզուալ» պատկեր:

5. Կավվինոյի Ֆանտաստիկ վեպերի ժանրի բնորոշման մեջ կարևորվում են թե՛ *արտաքին* ձևը՝ շարահյուսությունը (պատումը, շարադրանքը, կառուցվածքը), թե՛ ներքինը՝ իմաստաբանությունը (թեմատիկ տարրերը, մոտիվները, ֆանտաստիկ իրադարձությունները, կերպարանափոխությունը, կախարդական արարածները և այլն):

6. Կավվինոյի ֆանտաստիկ վեպի *քրոնոտոպը* ներկայացված է *անցյալի* պատմական իրադարձությունների և պատումի ներկայի համադրումով, ինչպես նաև հեքիաթային, էպիկական և արկածային վեպերին հատուկ գեղանկարչական ֆոնը ստեղծող բազմապիսի տոպոսների նկարագրությամբ: Կավվինոյի այս շրջանի վեպերում տեքստային միջոցներով ստեղծված Ֆանտաստիկը պատկերված է *իրականի* համատեքստում:

7. Հեղինակի ներմուծած տարբեր ժանրերի՝ հեքիաթի, հերոսական պոեմի, արկածային և ավազակային, դաստիարակության, ասպետական և այլ վիպական ժանրերին հատուկ տարբերը, տարբեր կերպ արտահայտվելով՝ յուրօրինակ վիպական փոխակերպումներ են ստացել: Այսպես՝ Կիսված վիկոնտը՝ վեպում վերաիմաստավորում և վիպականացում են ստացել *կախարդական հեքիաթը* և *կերպարի երկվության* թեման, «Բարոնը ծառի վրա» վեպում ժանրային բազմաշերտության մեջ տարբերակվում են *պատմավեպը, դաստիարակության, ավազակային և արկածային* վեպերը, որոնք այստեղ ծաղրական մեկնաբանություն են ստանում, «Գոյություն չունեցող ասպետում» հեքիաթային պատումի ֆոնին վերամեկնաբանվում են *պատմավեպի, ասպետական վեպի և հերոսական պոեմի* ժանրային տարրերը:

8. Կավվինոյի եռերգության վեպերում պատումը ներկայացված է առաջին դեմքով, *հոմոդիեգետիկ պատմողների* անունից: Պատմողը որպես իրադարձությունների ականատես կամ տարեգիր, պատում է իր *հիշողությունները*՝ ուստի դառնում է «անվստահելի պատմող» (*unreliable narrator*):

9. Կալվինոյի «հերալդիկ» եռերգության *արդիականությունը* պայմանավորված է վեպերի հերոսների ժամանակից մարդու օտարացումն արտացոլող «ես»-ի ճգնաժամով, *ինքնության և իդեալական աշխարհի որոնումով*:

10. Կալվինոյի ուշ պոստմոդեռնիստական շրջանի (1970-ական թթ.) երեք՝ «Խաչված ճակատագրերի ամրոցը», «Անտեսանելի քաղաքներ», «Եթե ձմեռային մի գիշեր մի ճանապարհորդ» վեպերի ժանրային և կառուցվածքային խնդիրների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ դրանցում առկա են պոստմոդեռնիստական գրականությանը բնորոշ *ինքնարտացոլումը, մետապատումը, միջտեքստայնությունը, հատվածայնությունը, հեզնանքը, ներդաշնակության և քառույի, իրականության և պատրանքի փոխհարաբերությունները*, Բ.Հասանի բնորոշած տարրերի «շղթան», որ տեքստը դարձնում են *բաց և ազատ*, իրականի և անիրականի՝ էթերայինի մեջ լուծված, *տեսիլայինի և ցնորականի վերածված ֆանտաստիկը, հեղինակ և տեքստ, ընթերցող և տեքստ* փոխհարաբերությունները և տեքստային *խաղը*:

11. Կալվինոյի պոստմոդեռնիստական շրջանի վեպերում կարևորվում է ընթերցողի դերը, *պատումն* առավելապես «տեքստային» է դառնում, իսկ վերջին վեպում նույնիսկ չքանում է ամբողջությամբ վերածվելով *տեքստի*:

12. Կալվինոյի ուշ շրջանի վեպերին բնորոշ են *բաց տեքստային տարածությունը*, տեքստային տարրերի *համակցումները* և *խաչաձևումները*: Նման հնարների ամբողջությունը գրականագիտության մեջ ստացել է *հիպերտեքստ* անվանումը: Այն ներկայանում է բազմաթիվ տեքստերի *համակցման* խաղի (*gioco combinatorio*) տեսքով. «Խաչված ճակատագրերի ամրոցում» տարրի միևնույն քարտերից ստացվող տարբեր պատմությունների, «Անտեսանելի քաղաքներում»՝ շախմատաքարերի և ժեստերի լեզվով պատմված տեքստի, «Եթե ձմեռային մի գիշեր մի ճանապարհորդ» վեպում՝ մեկ վեպի մեջ տարբեր «վեպերի» համակցման ձևով: Այս բոլոր հնարներն ու տեքստային առանձնահատկությունները Կալվինոն անվանում է *հիպերվեպ*:

13. «Խաչված ճակատագրերի ամրոցը» վեպը ներկայացնում է պատմություններ ստեղծելու և դրանք մեկ պլոտային գծով միավորելու հնարավորությունը: Վեպի հիմնական առանձնահատկություններն են տարրի պատկերներից պատմություններ ստեղծելը, դրանց տարբեր ընթերցումներն ու մեկնաբանությունները, խաչաձևումները, հայտնի դասական կերպարների ներմուծումը և վերաիմաստավորումը, կերպարների երկակիությունը, իրականության ընկալման տարբեր կողմերը:

14. «Անտեսանելի քաղաքները» վեպն իր յուրօրինակ ֆրագմենտար կառուցվածքով, տեքստային տարրերի անսովոր համակցումների, պատմող-ունկնդիր, հեղինակ-տեքստ, տեքստ-ընթերցող երկակի և խնդրահարույց փոխհարաբերությունների, ժանրային երկիմաստությունների շնորհիվ ստեղծում է բացառապես նոր վիպական խոսույթ: Այստեղ բառերի և ժեստերի լեզուն տանում է իրականության առավել խորը և հակասական արտահայտման:

15. Վեպի՝ կանացի անուններ կրող քաղաքներին նվիրված ֆրագմենտները՝ *Վինյետները*, «արձակ պոեմներ» են, որոնք իրենց ակնթարթային նկարագրությամբ և ռիթմիկ բնույթով կարող են ընկալվել որպես բանաստեղծություններ և ժողովածու և ժանրային առումով մոտ լինել Դանթեի «Նոր կյանքին» կամ Պետրարկայի «Տաղարանին», որոնցում իրարից անկախ բանաստեղծությունները կապված են ներքին «քնարական» շրջանակով: Համակցման խաղի միջոցով քաղաքների միջև առաջանում է ներքին և արտաքին կապ, որը դրսևորվում է Վինյետների կրկնվող վերնագրերում:

16. Վեպի ***քրոնոտուպը*** խնդրահարույց է, քանի որ նկարագրված բոլոր քաղաքները «անտեսանելի» են, անիրական և ներկայացված են որպես հիշողություն, տեսիլք, ներկայի, անցյալի ու ապագայի հատման խաչմերուկ: Վինյետներում արտացոլված հատկապես անցյալի թեման «Անտեսանելի քաղաքները» մոտեցնում է *վեպ-մեմուար* ժանրին: Վեպում բացակայում է *ճանապարհի տուպոսը*, քանի որ շարժում, որպես այդպիսին, չկա: Քաղաքների ընկալման մեջ իրականի և անիրականի երկակիության խաղը ներկայացված է *երկրային կյանքի և հանդերձյալ աշխարհի փոխհարաբերությամբ*, ինչպես նաև *հայելայնությամբ*: հայելին արտացոլում է իրականությունը և միաժամանակ հերքում այն ստեղծելով իրենը, որն էլ իր հերթին դառնում է անիրական:

17. «Եթե ձմեռային մի գիշեր մի ճանապարհորդը» *վեպ-լաբիրինթոս* է, որտեղ բազմաթիվ առանձին տեքստերն իրենց հերթին պարունակում են այլ տեքստեր, որոնք միավորվում են վեպի մեկ ընդհանուր *մետապատումի* մեջ:

18. Վեպի գլխավոր հերոսը՝ անանուն Ընթերցողը, տարբեր վեպ-ինցիպիտներ կարդալուց հետո «մակրոտեքստում» մեկնաբանում է իր ընթերցածը, իսկ վեպի վերջում՝ նաև իր մասին գրված տեքստը: Վեպերից ոչ մեկը գծային պատում չունի. այն պահին, երբ ամեն ինչ սկսում է ինչ-որ բացատրություն ստանալ, ընթերցանությունն ընդհատվում է, և Ընթերցողը վերադառնում է իրական աշխարհ:

19. «Եթե ձմեռային մի գիշեր մի ճանապարհորդը» վեպի ժանրային շերտերից առաջնային տեղն են գրավում սիրավեպն ու թրիլերը, իսկ վեպ-ինցիպիտներում՝ հակաուտոպիան, էրոտիկ վեպը, լրտեսական թրիլերը:

Ատենախառության թեմայով հրատարակված հոդվածները

1. Իտալո Գալվինոյի բարոյա-փիլիսոփայական հայեցակարգի գեղարվեստական արտահայտումը «Գիսված վիկոնտը» վիպակում// Գրականության և մշակույթի արդի հիմնախնդիրներ, Պրակ Ե, ԵՊԼՀ, Լինգվա, Երևան 2015, էջ 92-98
2. Ինքնության որոնման խնդիրը Ի.Գալվինոյի «Գոյություն չունեցող ասպետը» վեպում//Գրականության արդի հիմնախնդիրներ, Պրակ Զ, ԵՊԼՀ, Լինգվա, Երևան 2015, էջ 157-164

3. «Պատրանքի» և «իրականության» փոխհարաբերությունը Ի.Կալվինոյի «Խաչվող ճակատագրերի ամրոցը» և «Անտեսանելի քաղաքները» վեպերում//Գրականության և մշակույթի արդի հիմնախնդիրներ, ԵՊԱՀ, Լինգվա, Երևան 2016, էջ 283-288

Аветисян Баграт Епремович

Жанровые трансформации в прозе Итало Кальвино

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.01.07 «Зарубежная литература».

Защита состоится 24 июня 2016 г. в 12.30 на заседании Специализированного совета Армянской и зарубежной литературы 003 Института литературы им.М.Абегамяна по адресу: Ереван, ул. Григора Лусаворича, 15

Резюме

Диссертация посвящена исследованию творчества крупного итальянского писателя Итало Кальвино, анализу жанровых, тематических и композиционных особенностей, определивших жанровые трансформации его прозы.

Важность и **актуальность** данного исследования определяется тем, что эволюция творческого метода Кальвино и обусловленные ею особенности трансформации романских жанров в его творчестве не только отражают, но в значительной степени определяют объективный ход развития европейской прозы XX века.

Методологической и научной основой исследования являются теоретические положения крупнейших литературоведов, представление о романе XX века, как сложной и многоплановой жанровой, композиционной и содержательной структуре, которая вбирает в себя многие черты, присущие разным жанрам, переосмысливает и по-новому их интерпретирует. Постоянно развиваясь и подвергаясь самоиронии, роман обретает новые возможности и новые жанровые слои, оставаясь при этом незаконченной формой, дающей возможность множественных продолжений.

Диссертация состоит из Введения, двух глав, заключения и списка использованной литературы.

Во Введении обосновывается выбор темы, ее актуальность и новизна, приводится история изучения вопроса, формулируются цель и задачи исследования.

В *первой главе*, озаглавленной «**Жанровое своеобразие прозы Итало Кальвино 1950-60-х годов**», анализируются основные положения теории жанра, в частности – романного жанра, на основе которых формируются авторские подходы к проблеме.

Творческий путь Кальвино в связи с изменениями его художественного метода подразделяется на три основных периода, (неореалистический, фантастический и постмодернистский), однако основное внимание в диссертации уделяется произведениям второго и третьего этапов. Это объясняется тем, что первый, *неореалистический* период творчества писателя (1940-е военные и послевоенные годы) – это период становления писателя, поиска творческих путей, во многом определенных социально-политическими требованиями эпохи. Созданные Кальвино в этот период сборник рассказов «Последним прилетает ворон» и роман «Тропа паучьих гнезд...» характеризуются присущими неореализму простотой изложения, одноплановостью персонажей, линейной композицией, реалистическим изображением провинциальной жизни с использованием элементов местных наречий.

Представляющие научный и художественный интерес новаторские эксперименты с жанром и возможностями его трансформации связаны с двумя последующими периодами в прозе Кальвино. В результате художественных поисков и изменения авторского мировосприятия, изображение реальной действительности сменяется фантастическими картинками, изменяется романный хронологический топос, композиция, система образов. В написанных в этот период *фантастических* романах («Раздвоенный виконт», «Барон на дереве», «Несуществующий рыцарь»), составляющих «геральдическую» трилогию «Наши предки», фантастическое проявляется в форме *воображаемого, чудесного, необычного и необъяснимого*. Это касается в первую очередь подчеркнутого уже в заглавиях романов физического состояния героев, которое сам Кальвино называл *предварительным визуальным образом*.

Основанием для определения жанра романов Кальвино как фантастических являются особенности их как *внешней* (нарратив, композиция), так и *внутренней* (темы, мотивы, фантастические события, перевоплощения, волшебные деяния и т.д.) формы.

Особенностью *хронологического* фантастических романов Кальвино являются *пространственная безграничность*, созданная путем введения типичных для сказки, эпоса и авантюрного романа многочисленных топосов и *синтез времен* – прошлого (описание псевдоисторических событий) и настоящего (рассказ очевидца). Повествование ведется в романах от первого лица, при этом рассказчик, опираясь на собственные воспоминания, предстает как *недостовверный (unreliable narrator)*.

Жанровые трансформации в фантастических романах Кальвино определяются экспериментами в сочетании модифицированных автором элементов, присущих разным жанрам – *сказке, приключенческому, авантюрному, рыцарскому, воспитательному и другим жанрам романа*. Так, в романе «Раздвоенный виконт», основанном на переработке литературной темы раздвоения образа, романизируются и переосмысливаются элементы *волшебной сказки*, в

«Бароне на дереве» пародируются элементы *исторического, воспитательного, приключенческого, авантюрного* романа, а в «Несуществующем рыцаре» очевидны черты *ироикомической поэмы и исторического и рыцарского* романов.

Вторая глава, озаглавленная «**Жанровые и композиционные особенности романов Кальвино постмодернистского периода**», посвящена анализу романов 1970-х годов – «Замок скрещенных судеб», «Невидимые города», «Если однажды зимней ночью путник...».

В этой главе выявляется наличие в этих романах таких эстетических черт постмодернизма как *самоотражение, метатекст, интертекстуальность, фрагментарность, ирония, соотношение гармонии и хаоса, реальности и иллюзии, текстуальная игра, отношения автор-текст, читатель-текст*.

В постмодернистских романах Кальвино подчеркивается роль читателя, *нарратив* заменяется *текстом*. Романам этого периода свойственны *открытое текстовое пространство*, сочетание и перекрещивание текстовых элементов, что позволяет определять их как *гипертекст*, представленный в виде комбинаторной игры.

В романе «Замок скрещенных судеб» используется прием объединения сквозной сюжетной линией в единый текст разных фрагментов, которые прочитываются и интерпретируются с помощью карт таро, в «Невидимых городах» - с помощью шахматных фигур и языка жестов. Фрагментарная композиция построена на соотношении и взаимодействии участников дискурса: рассказчик – слушатель, автор-текст, текст-читатель. Отдельные *виньеты* – «поэмы в прозе» – представленные и собранные воедино, напоминают композицию классических итальянских образцов поэтических сборников Данте («Новая жизнь») или Петрарки («Книга песен»).

Проблема хронотопа в романе осложняется тем, что все города – невидимы, предстают в виде зеркальных отражений, видений, пространства, где пересекаются времена. В этом романе Кальвино вновь использует прием введения известных исторических и литературных персонажей. «Если однажды зимней ночью путник...» – роман-лабиринт, *гиперроман*, в котором совмещены инципиты разных романов, которые в свою очередь входят в единый «*метанарратив*». В этом итоговом произведении Кальвино присутствуют жанровые наслоения (любовный роман, триллер, антиутопия, эротический роман и т.д.), интертекстуальность, текстуальная игра, фрагментарность, ирония и другие эстетические черты постмодернистской эстетики.

В заключении диссертации обобщены итоги проведенного исследования.

Bagrat Avetisyan

The transformation of prose genres in the works by Italo Calvino

Dissertation for obtaining the degree of Candidate of Philology
Specialty 10.01.07 – “Foreign Literature”

The defense of the dissertation will take place on June 24th, 2016, at 12:30, at the
Specialized Council of Armenian and Foreign Literature 003 at the Institute of
Literature

after M.Abeghyan, NAS, RA.

Address: Gr.Lusavorich Str. 15, Yerevan, Armenia.

SUMMARY

Research touches upon the study of the works by prolific Italian writer Italo Calvino, analysis of genre, thematic and structural features defining genre transformations in his prose. The importance and relevance of the study is defined by the fact that the evolution of Calvino’s creative method and transformations of the novelistic features in his works not only reflect, but to a large extent determine the objective course in the development of the 20th century European prose.

Theoretical propositions of major literary critics are the methodological and scientific basis of the research. The idea of the 20th century novel as a complex and multi-faceted genre, incorporating many of the features inherent in different genres, reinvents and reinterprets them. Constantly evolving and undergoing self-irony, the novel obtains new opportunities and new genre layers, while remaining as an unfinished form, giving the possibility to multiple sequels.

The dissertation consists of introduction, two chapters, conclusion and bibliography.

In the introduction the choice of the topic, its topicality and novelty are presented, the aim and objectives of the study are formulated the critical literature on Calvino’s works is summarized.

In **the first chapter** entitled "The main features of the prose of 1950-60s by Italo Calvino" the main provisions of the theory of the genre (the novel, in particular) are analyzed on the basis of which the author's approach to the problem is formed.

Calvino’s creative work is divided into three main periods, (neorealist, fantastic and postmodern fiction) related to the changes in the artistic method. However, the focus of the dissertation is on the works of the second and third stages. This is because the first, neorealistic period (1940 war and postwar years) is a period of the writer’s search of creative ways, largely determined by socio-political requirements of the era. A collection of short stories "The Crow Comes Last" and his very first novel "The path of cobwebs" written in this period are characterized by simplicity of

narration, one dimensional characters, linear composition, realistic depiction of provincial life containing elements of local dialects.

Scientific and artistic interest in innovative experiments with the genre and its possibilities of transformation is associated with two successive periods in Calvino's prose. Thus, as a result of the artistic exploration and the change of authorial perception of the world, the image of reality is replaced by fantastic images, the changes of the novelistic chronotope, composition and system of characters.

In the fantasy novels written in this period ("The Cloven Viscount", "The Baron on the Trees", "The Non Existent Knight), which form the "heraldic" trilogy "Our ancestors", fantastic is expressed in the forms of the *imaginary, the wonderful, the strange and the inexplicable*.

The fantastic especially deals with the physical state of the heroes, called "preliminary visual images" by the author himself, given in the titles of the novels. The basis of defining Calvino's novels as "fantastic" are the features of both the form (narrative, composition), and the substance (themes, motives, fantastic events, transformations, magic spells, etc.). An important feature of fantastic in the trilogy is its depiction in the context of the real.

The main feature of the chronotope in Calvino's fantasy novels is the spatial immensity, created by the introduction of numerous topoi inherent in the fairy tale, heroic epic, adventure novel and the synthesis of times- past (the description of pseudo-historic events) and the present (eyewitness narrative). The narrative in the novels is first person, the narrators relying on their own memories appear as 'unreliable' (unreliable narrator).

Genre transformations in Calvino's fantasy novels are characterized by the experiments in combination with the elements modified by the author, inherent in different genres and narrative types, such as literary fairy tale, adventure novel, picaresque novel, bildungsroman, chivalric romance, and other novelistic genres. Furthermore, in "The Cloven Viscount" based on the elaboration of the literary double the elements of magical fairy tale are novelized and reinvented. The elements of historical, adventure novels and bildungsroman are parodied in "The Baron on the Trees". Certain features of heroic romance and historical novel are present in "The nonexistent knight".

The second chapter, entitled "The Artistic Features of the Novels of Calvino's Postmodern Period" focuses on the analysis of the novels written in the 1970s, such as "The Castle of Crossed Destinies", "The Invisible Cities", "If on a Winter's Night a Traveler...".

In this chapter Features inherent in the postmodern aesthetics, such as self-reflection, metatextuality, intertextuality, fragmentation, irony, correlation between harmony and chaos, reality and fiction, textual play, relationships of author and text, reader and text, are studied.

In the postmodern novels by Calvino the role of the reader is emphasized, the *narration* gets replaced by the *text*. In the last novel, “If on a Winter’s Night...” the narration is generally absent. The features common to the novels of this period is an *open textual space, combination and crossings of textual elements*, a literary artifice known as a **combinatory game**. All the features characterize the novels as examples of *hypertext*.

In “The Castle of Crossed Destinies” the artifice of combining different textual fragments into one storyline is employed. Each fragment, presenting a separate story, is read and interpreted with the help of tarot deck cards. In “The Invisible Cities” the fragmented composition is built on the context of correlation and dialogues between the participants of the discourse: narrator – listener, author - text, text-reader. Separate vignettes- “poemes-en-prose”- presented with chess figures and pantomime, are grouped in one text and resemble the composition of classic Italian poetry collections, such as Dante’s “La Vita Nuova”, Petrarch’s “The Book of Songs”.

The chronotope is problematic for the reason that the cities are ‘invisible’, presented in specular reflections, visions, spaces where different times intersect. In this novel Calvino again employs the artifice of introducing famous historical figures and literary characters.

“If on a Winter’s Night a Traveler” is a novel-labyrinth, a **hyper-novel**, where the ‘incipits’ of different novels are combined in one large “metanarrative”. In this ‘magnum opus’ of Calvino different genre layers (romance, thriller, dystopia, erotic novel, etc.) and intertextuality, textual play, fragmentation, irony and other features of postmodern aesthetics are present.

In the **Conclusion** the main outcomes of the research are presented.